ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«11» հունիսի 2019 թվականի N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1.1-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի N 718-Ն որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ին կայացած նիստը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի նախահաշվում և գնումների պլանում (բաժին 01, խումբ 01, դաս 01 ծրագիր 1213, միջոցառում 11001) փոփոխության նախագծին.

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Է. Խուրշուդյանին՝ սույն որոշման 2-րդ կետով հավանության արժանացած նախագիծը սահմանված կարգով ներկայացնել շրջանառության:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Թ. Հակոբյանին առաջարկել Խորհրդի հաջորդ նիստին, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով ներկայացնել 2019 թվականի 1-ին եռամսյակի գործունեության ուսումնասիրության և վերլուծության վերաբերյալ հաշվետվության հիման վրա բացահայտված դեպքերի մասին տեղեկատվություն՝ անհատական և առարկայական, ինչպես նաև առկա խախտումները և թերությունները վերացնելու նպատակով և կիրառման ենթակա պատասխանատվության միջոցների վերաբերյալ առաջարկություններ:

5. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակի նախագիծը ներկայացնել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկության՝ քննարկելու և հավանության արժանացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/10/2019 16:37:27 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360